XVII դ. ԲԱՆԱՍՏԵՂԾ ՍՈՒՔԻԱՍԸ

ՀԱՍՄԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

XVII դ. բանաստեղծությունը հայ միջնադարյան տաղերգության օրգանական շարունակությունը լինելով, միաժամանակ մի շարք տիպական առանձնահատկություններ ունի, որոնք պայմանավորվում են տվյալ ժամանակաշրջանի պատմաքաղաքական ու սոցիալ-տնտեսական հանգամանքներով։ Սկսած XVI դ. կեսերից հայ բանաստեղծության մեջ ավելի անսքող և կոնկրետ ձևերով են հանդես գալիս աշխարհիկ մոտիվները, փոփոխություններ են տեղի ունենում կրոնական տաղերի ներքին բնույթի մեջ, առավել հախուռն ու շոշափելի է դրսևորվում հեղինակների մտածողության աստիճանական դեմոկրատացումն ու ժողովրդականացումը։ Մի հանգամանք, որի շնորհիվ լայնանում է բանաստեղծության թեմատիկ ընդգրկումը, և լեզուն շատ դեպքերում մոտենում ժողովրդական-խոսակցականին[1]։ Այս երևույթները որոշակիորեն ու բանաստեղծական բարձր արվեստով են արտահայտվում հատկապես XVII դ. շնորհաշատ և ինքնատիպ հեղինակների՝ Դավիթ Սալաձորցու, Քոսա Երեցի, Մարտիրոս Ղրիմեցու, Երեմիա Քյոմուրճյանի, Օքսուզ Ավետիքի, Հովհաննես և Սարգիս Հալեպցիների, Անդրեաս Արծկեցու և վերջապես Նաղաշ Հովնաթանի երկերում, որոնք մի տեսակ ամփոփում, ամբողջացնում են ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը։ Միաժամանակ նկատվում է, որ XVII դ. երկրորդ կեսին հանդես եկած որոշ բանաստեղծներ, օրինակ՝ Իգնատիոս Համբեցին, Սիմեոն Կաֆացին, Ստեփանոս Դաշտեցին և ուրիշներ, մեծ ուշադրություն են դարձնում ոտանավորի ձևական կողմին և ձգտում լեզուն կարելիորեն չափ մոտեցնել այսպես կոչված «պարզ գրաբարին», որը տիրապետող է դառնում ավելի ուշ՝ XVIII դ. մի շարք բանաստեղծների երկերում։

Այս կարգի բանաստեղծներից է նաև Սուքիասը, որի բանաստեղծական ժառանգությունը դրեթե անծանոթ է ընթերցող հասարակայնությանը, քանի որ նրա՝ մեզ հայտնի 53 ոտանավորներից միայն հինգն են հրատարակված, այն էլ վաղուց, այժմ արդեն հազվագյուտ դարձած հնատիպ տաղարաններում[2]։ Բանասիրությունը ևս համարյա լռությամբ է անցել այս բանաստեղծի կողքով։ Տողերիս հեղինակը իր «Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը» աշխատության մեջ միայն թեթևակի անդրադարձել է նրա մի քանի ոտանավորներին։ Ուստի մեր նպատակն է ինչ որ չափով լրացնել այդ թերին, ընթերցողներին ծանոթացնել Սուքիասի ստեղծագործությանը և համառոտակի բնութագրել XVII դ. այդ ինքնատիպ բանաստեղծին։

Սուքիասը 1702 թ. հորինած «Ի բոլոր սրտէ մեղուցեալ մարմնոյս» սկսվածքով իր ոտանավորում[3] ասում է, որ այն գրելիս եղել է 66 տարեկան։ Հետևաբար, նա ծնվել է 1636 թ.։ Նա սովորություն է ունեցել ծածկագրերով հայտնելու իր ոտանավորների գրության թվականները։ Մեզ հայտնի վերջին տարեթիվը 1707-ն է։ Թե դրանից հետո էլի ինչքան է ապրել, հայտնի չէ։ Նույն ոտանավորներից կարելի է քաղել նաև մի քանի այլ տեղեկություններ։ Օրինակ՝ «Իմ տիրաշէն քաղաք մարմնոյս» սկսվածքով ոտանավորից[4] տեղեկանում ենք, որ Սուքիասը կանոնավոր հոգևոր կրթություն է ստացել «Իւսեալ եկի ի չափ ուսման ի կարգի // Առ վարդապետս դեպերեցայ ի գրի»։ Շատ ոտանավորներում նշվում է, որ եղել է վարդապետ։ «Ի զրոսանս հեշտութեան տեսութեան աչաց» սկսվածքով ոտանավորից[5] հայտնի է դառնում, որ ապրել և ստեղծագործել է Վանում, իսկ «Ի շխանին, դիւաց բանարկուին» տողով սկսվող ոտանավորից[6] իմանում ենք, որ 1689 թ. զրպարտվելով՝ ձերբակալվել ու 6 ամիս մնացել է բանտում։

---

1 *Այս հարցերի մասին ավելի մանրամասն տե՛ս Հ. Սահակյան, Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, Երևան, 1975։*

2 *Սուքիասի 27 ոտանավորների քննական բնագրերը կհրատարակվեն մեր կազմած «Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը» (բնագրեր) ժողովածուի Բ հատորում։*

3 *Մ. Մաշտոցի անվան մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. № 1635, թ. 40ա—40բ։*

4 *Նույն տեղում, թ. 10բ—11ա և ձեռ. № 10167, թ. 41բ։*

5 *Նույն տեղում, թ. 24բ—25ա և ձեռ. № 6588, թ. 56բ։*

6 *Նույն տեղում, թ. 25բ—26բ և ձեռ. № 6588, թ. 27բ—28բ։*

Սուքիասի ստեղծագործության մեջ գերակշռում են կրոնա-մեղայական բանաստեղծությունները, որոնցում նա կանոնիկ ձևերով խոսում է իր գործած ու չգործած «մեղքերի» մասին, առաջին հերթին շեշտելով, որ հաճախ է անտեսում հոգևորն ու հակվում դեպի աշխարհայինը.

Քան զաստուծոյ սէրն առաւել դիս կամեցայ,
Ի ցանկութիւն սուտ աշխարհիս հետեւեցայ,
Անյուսութեամբ զհանդերձեալ կեանս չիմացայ,
Մեղայ, մեղայ, բիւրապատիկ գլորեցայ[7]։

Սէր զաշխարհիս յոյժ սիրեցէր,
Զփառս սորին ընդդրկեցէր,
Զաստուծոյ սէրն յետ ձգեցէր...[8] և այլն։

Դժվար չէ նկատել, որ ինչպես XVI—XVII դդ. բազմաթիվ այլ հեղինակների, այնպես էլ Սուքիասի ապաշխարությունն այլևս նախորդ դարերի բանաստեղծների ապաշխարության անձնականությունը չունի։ Նրա մեղայական ոտանավորները Վրթանես Սանկեցու, Թորոս Ստամբոլցու, Գալուստ Ամասիացու և ուրիշ ժամանակակիցների ոտանավորների նման մեծ մասամբ չոր ու ցամաք գործեր են, որոնցում նա մեկ առ մեկ առարկայական կոնկրետությամբ արձանագրում է իր «մեղքերը»՝ ավելի ազդեցիկ լինելու համար գությունը խտացնելով։ Այդ թվարկումների մեջ քիչ թե շատ ուշագրավը, թերևս, հեղինակի հոգևոր պաշտոնի հետ կապված զանցանքներն են.

Սնափառ հպարտմամբ զպատիվ սիրեմ,
Հպարտիս հսկայից յաթոռ նստեալ եմ...
Քան զչափն առաւել աւելահոգ եմ,
Ոչ թէ վասն աստծոյ, այլ զի հպարտ եմ...
Իբարպէս հանդերձիւք խենեալ պճնեալ եմ
Եւ ոտից ընթացիւք դիս յանդիմանեմ,
Ծաղրերես, մեծաձայն, զետ փուչ հարճատեմ...[9] և այլն։

Ուրիշ օրինակներ էլ կարելի է բերել ցույց տալու համար, որ Սուքիասը շատ և բազմակողմանի է անդրադարձել քրիստոնեական «մեղքի» գաղափարին, բայց, չնայած ինքնադատապարտման, ինքնախարազանման բազմաթիվ արտահայտություններին, ոտանավորներից չի զգացվում, թե խորապես հուզված է եղել այդ «մեղքերը» կատարած լինելու համար կամ թե ապրել է հոգեկան մեծ խռովք։ Ճիշտ է, նրա ոտանավորներում քիչ չեն աստծուն ուղղված մեղայական բառերը («Տե՛ր, ողորմեա անառակիս», «Փրկեա զիս, աստուածա և այլն), բայց դրանք ոչ թե նրա սեփական հույզի արտահայտություններն են, այլ անցյալից ավանդաբար եկող բանաձևվեր, որոնք հատուկ են դասական նույնատիպ բանաստեղծություններին։ Սրա պատճառն այն է, որ Սուքիասը քրիստոնեական կրոնի հիմնական դրույթներից մեկը՝ հոգու և մարմնի անընդհատ հակամարտությունը, չի համարում հոգեկան իսոր ողբերգություն, ինչը հատուկ էր տաղերգուներին։ Նա օժտված է իր ժամանակի հարաբերություններով պայմանավորված մտածողությամբ ու հոգեբանությամբ և, ինչպես XVI—XVII դդ. հեղինակներից շատերը, հոգու և մարմնի հակամարտությունը դիտում է որպես անհատի կամքից անկախ մի բան, ուստի և ներքուստ իրեն այնքան էլ պատասխանատու չի զգում դրա համար։ Նրա սիրտն այլևս այնպես չի կրակվում, ինչպես իր նախորդների սրտերը։ Նա եկել է այն համոզման, թե հների օրինակով կատարվող աղոթքները միանգամայն բավարար են թողություն ստանալու համար։ Դրա համար էլ ամենևին պատահական չէ, որ նրա ոտանավորների մեջ զգալի քանակ են կազմում բարոյախրատական բնույթի հորդորները, որոնցով նա, որպես հոգևոր առաջնորդ, աղոթքի միջոցով ապաշխարության է մղում իր հոտին.

---

7 Նույն տեղում, թ. 24ա։
8 Նույն տեղում, թ. 11ա և ձեռ. № 6588, թ. 24բ։
9 Նույն տեղում, թ. 19ա—19բ։

Ծիր և արի լեր ի յաղօթս,
Մի՛ ձանձրանալ յաշխարհի զբոս...
Մանուկ, կամիմ զքեզ բան խօսել,
Զխորս իմաստից ուսուցանել,
Ուշիմ մտօք առ այս հայել,
Որով կարող լիցիս ապրել։

Յիշեա զմեղս զոր գործեցիր,
Բաց ի յիշեն զչարացիր,
Մի՛ սակս մեղաց յուսահատիր,
Այլ վերստին առ Տէր դարձիր[10]։

Ինչպես երևում է մեջբերված հատվածից, Սուքիասի կարծիքով հարկ չկա ինքն իրեն շատ տանջելու և հուսահատվելու. «մեղքերը» քավելու համար բավական է կրկին դառնալ դեպի տերը և աղօթել։ Սա պարզ վկայությունն է այն փոփոխության, որը տեղի է ունեցել ժամանակի բանաստեղծների մտածողության ու հոգեբանության մեջ և ինքնաբերաբար արտահայտվել ապաշխարության ոտանավորներում։ Այսինքն՝ աստիճանաբար կյանքում հաղթանակող աշխարհայինը նույնիսկ հոգևորական հեղինակներին է ստիպել փոքր ինչ այլ կերպ վերաբերվել իրենց դավանած կրոնի դոգմաներին։

Սրանով է պայմանավորվում նաև XVI—XVII դդ. շատ հեղինակների, այդ թվում նաև Սուքիասի, ապաշխարության տաղերի բանաստեղծականության պակասը՝ անցյալի համանման տաղերի համեմատությամբ. այն, որ հուզական պատկերների փոխարեն նոր հեղինակներն աշխատում են ոտանավորն առատորեն հագեցնել ձևական հնարանքներով, պարտադիր կերպով պահպանել ծայրակապերը, կրկնակները, թեկուզև դրանք լինեն բռնազբոսիկ, քիչ առնչվեն, իսկ երբեմն նաև ամենևին չառնչվեն բանաստեղծության կամ տվյալ քառատողի իմաստին, օգտագործել դժվարահունչ, ճոռոմ, «գեղեցիկ» բառեր և այլն։ Բերենք երկու օրինակ.

Բէն բարունուց բէնատեսին,
Բարունաբար բետոր բամին
Բամեալ բաղիկ, բախճան բոտին,
Բամկականաց բէնականին[11]։

Ի տոռունս ծուլութեան համաչափ մեղաց
Վարակեալ ըմբռնիմ յորոգայթ դիւաց,
Սկսեալ ի բարիս դանդաղ և կասկած,
Վաղափուլ խափանիմ, փրկեա զիս, առտուած[12]։

XVI—XVII դդ. հայ բանաստեղծության աշխարհիկ մոտիվներից մեկը մարդու կյանքի բընախոսական շրջանների նկարագրությունն է, մտորումները մարդու տարբեր հասակների մասին։ Այս տիպի ոտանավորներում շոշափվում են հասարակության մեջ մարդու գրաված տեղի, նրա դիրքի, ծնված օրից մինչև վախճան ձգվող ճանապարհի և այլ իմաստասիրական հարցեր։ Այս թեման առավել վարպետությամբ մշակել է Հակոբ Թոխաթցին «Անտուած ստեղծեաց զմարդն առաջին» սկսվածքով ոտանավորում[13]։ Նույն բնույթն ունի Սուքիասի «Իմ տիրաջեն քաղաք մարմնոյս»[14] տողով սկսվող ոտանավորը։ Մի հիմնական ընդհանրություն կա Հակոբ Թոխաթ-

10 Նույն տեղում, թ. 14ա, 16ա։

11 Նույն տեղում, թ. 56բ։

12 Նույն տեղում, թ. 21բ։

13 Նույն տեղում, ձեռ. № 1636, թ. 124ա—128բ և ձեռ. № 10066, թ. 35բ։ Հրատարակված՝ «Բազմավէպ», 1856, էջ 208—211։

14 Մատենադարան, ձեռ. № 1067, թ. 41ա, ձեռ. № 1635, թ. 10բ—11ա, ձեռ. № 6588, թ. 24ա—34բ (այսուհետև մեջբերումները մեր կազմած քննական բնագրից են)։

ցու և Սուքիասի տաղերի միջև։ Դա այն է, որ երկու հեղինակներն էլ ելնում են այն սկզբունքից, թե բնախոսական գործոններն են մեծ մասամբ կանխորոշում մարդու վարքագիծն ու տեղը հասարակության մեջ։ Սուքիասը, օրինակ, քայլ առ քայլ հետևելով այն փոփոխություններին, որ տեղի են ունենում մարդու հասարակական դիրքի, նրա ու շրջապատի փոխհարաբերությունների մեջ, տարիքով ու բնախոսական հանգամանքներով է բացատրում նրա բնավորությունն ու հասարակական կեցությունը։ Մանուկ հասակում մարդն ուտանում է, քանի որ այդ է պահանջում նրա բնախոսական վիճակը, պատանեկան տարիներին նույն պատճառով նա կատաղի է վայրի գազանի նման, իսկ երբ բոլորում է երեսուն տարին, ապա անխուսափելիորեն ընկնում է հազար ու մի մեղքերի մեջ.

Իսկ յերեսուն եղէ շափով կատարեալ
Երիտասարդ՝ հզոր ախտիւք յզփացեալ,
Ահ ու զար, ահ ու զար եղև,
Համայն ցնորք կենաց նկեալ պաշարեալ,
Եւ այն անցեալ օրերս ահ ու զար եղև։

Այսպես՝ նա մեկ առ մեկ նկարագրում է մարդու տարբեր հասակները՝ գնալով ավելի ու ավելի թախծոտ դարձող տողերում։ Ահա ծերության պատկերը.

Այնուհետև աւելխառնեալ ծերացայ,
Տկարացեալ, ցաւօք բազմօք մաշեցայ,
Ահ ու զար, ահ ու զար եղև,
Օր մի առողջ, օր մի ցաւօք տանջեցայ
Եւ այն անցեալ օրերս ահ ու զար եղև։

Ուրեմն՝ ծեր հասակում Սուքիասի համար ողբերգությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ ֆիզիկական ուժերի աստիճանական անկումը, որը նրան զրկում է կյանքը, աշխարհը վայելելու հնարավորությունից։ Այսինքն՝ այս դեպքում ևս նկատում ենք, որ բանաստեղծի մտածողության մեջ այլևս հաղթել է աշխարհայինը և նրա՝ ոտանավորի վերջում ասած մեղայականը՝ «Զանթիւ մեղս իւ ջնջել հայցիմ Գթածին», շատ է բռնազբոս ու չի համոզում, քանի որ անհարիր է տաղի իրապատում ոգուն, որը, ինչպես նկատեցինք, մարդու երջանկությունն ու ձախորդությունները կապում է ոչ թե երկնային ուժերի, այլ երկրի վրա գրված նրա դիրքի ու վիճակի հետ, թեև, իհարկե, այս հետևությունը ստացվում է ինքնաբերաբար։

Քանի որ մարդն իր կյանքի բնախոսական փոփոխություններով անգամ դառնում է բանաստեղծության առարկա, ապա, բնականաբար, ժամանակի բանաստեղծության մեջ առատանում են նաև այնպիսի ոտանավորները, որոնցում արտացոլվում են մարդու ապրումներն այս կամ այն դեպքի, ստեղծված այս կամ այն իրավիճակի կապակցությամբ։ Եթե հեղինակների կյանքում տեղի ունեցած դեպքերն անցյալներում կարող էին նյութ տալ լոկ հիշատակարանային բնույթի երկերին, ապա այժմ դառնում են նաև քնարական բանաստեղծության առարկա։ Այսօրինակ բանաստեղծություններ են XVI դ. հեղինակ Եղիա Բերկրցու «Տաղ ի յարգելանս ու վասն անձին»15 և Սուքիասին ժամանակակից Եփրեմ Ղափանցու «Թէ հարցանեք զսան իմ բանիս»16 ոտանավորները։ Դրանց շարքում է նաև Սուքիասի «Ուշխանին, դիւաց բանարկուին» սկսվածքով տաղը, որում նա պատմում է իր կյանքում տեղի ունեցած ամենածանր իրադարձությունը, այն, որ ընկերակից կրոնավորների զրպարտությամբ ձերբակալվել և ընկել է բանտ։ Թեև ոտանավորն ինքնակենսագրական հիմք ունի, սակայն այս հանգամանքը չի նոսրացնում երկի սոցիալական արժեքը, քանի որ Սուքիասն օբյեկտիվորեն ներկայացնում է ժամանակի համար տիպական սոցիալ-քաղաքական հարաբերություններ, այն, որ օտար բռնակալների լծի տակ ապրող հայերը երբեք չէին կարող իրենց ապահով զգալ բռնություններից ու հալածանքներից և նաև այն, որ հայ հոգևոր դասի մեջ եղել են մարդիկ, որոնք շահադիտական նպատակներով բռնակալների ձեռքն են հանձնել իրենց ազգակիցներին՝ զրպարտելով անմեղ մարդկանց։ Ահա թե ինչպես է բանաստեղծն արտահայտում իր հուսահատ զայրույթն այդ ստոր մարդկանց դեմ.

15 «Բազմավէպ», 1939, էջ 199։
16 Մատենադարան, ձեռ. № 7717, թ. 270բ—273ա։

Իշխանին, դիւաց բանաարկուին,
Ո՞չ գիտեմ զինչ արարի...
Այլազգեաց և մերթ մեր ազնեաց,
Տալով դիս ձեռքս ի ձեռաց,
Արծաթի, ոսկւոյ և գանձաց
Տէր ասելով հռչակած,
Անհամար զայս գանձս մթերած,
Ո՞չ գիտեմ զինչ արարի...
Առաքեալ զօրօք ըմբռնեած,
Մերկիկ և բոկիկ, գլխիբաց,
Կապանօք ոտից և ձեռաց,
Երես ի քարշ է տարած,
Վեց ամիս ի բանտի արգիլած,
Եկ, զայս ծանր բեռն բարձ,
Քրիստոսն երկրի պարոնաց
Ո՞չ գիտեմ զինչ արարի...
Մատնութիւնք միմեանց յոլոված,
Մինչ զի և մեք տուգանած,
Մխիկ և Մարգար սեագլխաց
Ո՞չ գիտեմ զինչ արարի[17]։

Նվ զարմանալի չէ. որ չնայած բանաստեղծական գեղեցիկ պատկերների սակավությանն ու շարադրանքի միահանգությանը, ոտանավորը, այնուամենայնիվ, ընթերցողին հուզում է իր սոցիալական խորքով, հերոսի ապրումների թեև պարզունակ, սակայն քնարական նկարագրություններով և ժողովրդի խոսակցական լեզվին բավականաչափ մոտ հայերենով։

Սուքիասի ստեղծագործության առավել արժեքավոր մասը սիրային ու բնությանը նվիրված երգերն են, այդ թվում նաև վարդի ու սոխակի ավանդական սյուժեի մշակումները։

Ինչպես XVI—XVII դդ. մի շարք այլ հեղինակներ, Սուքիասը ևս սիրային տաղերում իր հոգեբանությամբ ու աշխարհիկ մտայնությամբ բավական տարբեր է տաղերգուներից։ Նրա համար սերն այլևս արգելված պտուղ չէ և ոչ էլ կինն անհասկանալի ու տենչալի արարած[18]։ Իր ժամանակակիցների նման նա ևս արտացոլում է իր սիրո պատմությունը՝ դրան հատուկ ճակընթացություններով ու տեղատվություններով։ Սիրային տաղերից երևում է, որ նա ոչ միայն սիրել, այլև ճաշակել է սիրո վայելքը։ Դրա վկայությունն է, օրինակ, «Ի՞նչ քո սիրուդ յագել երբեք, ե՞րբ իցէ, սէր իմ, ե՞րբ իցէ» սկսվածքով ոտանավորը[19], որտեղ ափսոսում է անցած սիրո քաղցր պահերի կորուստն ու պատկերում վայելքի և տարփանքի կարոտը.

Արեկ, արեկ, ո՞վ իմ սիրուն սիրելի,
սէր իմ, սիրելի,
Կցորդ լեր ինձ, տառապեալս փարելի,
սէր իմ, փարելի,
Արժանացս սիրոյդ նախնոյ, նազելի,
սէր, իմ նազելի,
Համբուրելով դրկախառնիլ ե՞րբ իցէ,
սէր իմ, ե՞րբ իցէ։
Մինչդեռ չիցեմ կապեալ մահու ստուերէ,
սէր իմ, ստուերէ,
Փարիլ ի գիրկս տարփալոյդ, ե՞րբ իցէ,
սէր իմ, ե՞րբ իցէ...։

Սուքիասի սիրո տաղերի մեկ այլ գիծը, որ հատուկ է առհասարակ XVI—XVII դդ. սիրո երգերին, այն է, որ նա կնոջը դիտում է ոչ թե որպես սոսկ սիրո առարկա, այլ որպես սիրո հարցում տղամարդուն հավասար, մտածող ու զգացող էակ, նկարագրում է նրա ապրումները, գնահատում և ակնածում նրանից։ Օրինակ, վերը հիշատակված ոտանավորում նա խոստովանում է, որ ինքը մեղավոր է, քանի որ ծանր պահին ոչ միայն չի մխիթարել սիրած կնոջը, այլև լացացրել է։ Դորովալից սիրո ու վշտակցության գողտրիկ արտահայտություն է «Ինձի նման լալոտ աչք ընդե՞ր ես» սկսվածքով բանաստեղծությունը[20], որտեղ նկարագրելով սիրած կնոջ վիշտը, Սուքիասն աշխատում է մխիթարել նրան և հորդորում կրկին դառնալ դեպի կյանք.

---

17 Մեջբերումը՝ մեր կազմած քննական բնագրից։

18 Ավելի մանրամասն տե՛ս Հ. Սահակյան, Նշվ. աշխ., էջ 171—209։

19 Մատենադարան, ձեռ. № 1067, թ. 21ա—23բ, ձեռ. № 10723, թ. 64բ—65ա, ձեռ. № 2436, թ. 126ա—129ա, ձեռ. № 7259, թ. 12ա—12բ, ձեռ. № 7670, թ. 19բ—20ա, ձեռ. № 6588, թ. 21ա—22ա, ձեռ. № 9536, թ. 122բ և «Գիրք դպրութեան և տաղարան վայելուչ...», Կ. Պոլիս, 1714, էջ 235—236։

20 Մատենադարան, ձեռ. № 1635, թ. 18ա—18բ, ձեռ. № 9597, թ. 42բ—43բ։

Քեզ վայելուչ չէ լալն, դու էՙր կոծ կանես,
Քեզ վայել է խնդալ, ընդեՙր աշխարես, աշխարես,
Քեզ վայել է բեհեզ, էՙր սև արկանես.
Մի՛ լար, ազրմ, մի՛ լար այդպէս վշտալի, վշտալի։
Այսուհետև մի՛ լար, հոգիդ կու սիրես,
Սրբեա զարտօսրդ աչաց քո, կու սիրես, կու սիրես...

Ինչպես տեսնում ենք, դեպի կյանք դառնալու դրդապատճառը Սուքիասը սերն է համարում, այն, որ վշտահար կինը սիրո տեր է՝ «կու սիրես։ Ինչ վերաբերում է գորովալից կարեկցանքին, ապա բանաստեղծը դա խտացնում է, յուրաքանչյուր կրկնակում օգտագործելով մի քնքուշ բառ, մի սրտալի կոչական՝ դրանք առնելով ժողովրդական-խոսակցական լեզվից՝ «նազլըմ», «օմրում», «տոստըմ», «իմ տուն», «ազրմ», «սիրուն», «արև» և այլն։

Այս և նախորդ ոտանավորներում չկա կնոջ արտաքին բարեմասնությունների նկարագրություն, որն այնքան հատուկ էր տաղերգությանը։ Ու դա հասկանալի է, քանի որ, ինչպես նրա շատ ժամանակակիցների, Սուքիասի համար ևս գլխավորն այլևս կնոջ մարմնական բարեմասնություններով հիանալու զգացումը չէ, այլ սիրո ու վայելքի հոգեբանական նրբերանգների դրսևորումը։ Ընդ որում, այդ սերը մեծարելի է հենց նրանով, որ կենսատու է ու կենսահաստատ, աշխարհային՝ այս բառի ամենալայն իմաստով, քանի որ հակադրվում է մահվանն ու դրա պատճառած վշտին, միահյուսվում ուրախության, երջանկության պահանջին, որ բանաստեղծը պարտադիր է համարում ոչ միայն մարմնի, այլև հոգու համար.

Սիրով տամ քեզ խրատ, թէ ինձ կու լսես,
Ի բաց լեր ի լալուդ, թէ միտ կու դնես, կու դնես,
Հոգուդ, մարմնոյ խնդալն է պարտ, թէ գիտես.
Մի՛ լար, իմ տուն, մի՛ լար այդպէս զարնեմ, զարնեմ։

Այսպիսով, լինելով ջերմեռանդ հավատացյալ, ունենալով հոգևոր կոչում, Սուքիասն իր այս հումանիստական հորդորով ևս, փաստորեն, հակադրվում է քրիստոնեական մտայնությանը։ Այսինքն՝ այս դեպքում ևս գործ ունենք այն փոփոխությունների հետ, որ պատմական նոր շրջանում, նոր հարաբերությունների հետևանքով կատարվել էին մարդկանց հոգեբանության ու մտածողության մեջ։ Սուքիասի այս տաղն իր քնարականությամբ ևս շահեկանորեն տարբերվում է նրա կրոնաբարոյախոսական ոտանավորներից։ Այստեղ և՛ կարեկցանքի, և՛ գորովալից սիրո արտահայտություններն անմիջական են, անսեթևեթ. դա նկատվում է հատկապես կրկնակ տողերում, որոնք բանաբոսիկ չեն, ոչ էլ խճողված ձևական հնարանքներով և օրգանապես շարունակում են, ընդգծում ու լրացնում յուրաքանչյուր տան մեջ արտահայտված միտքը։

Դժբախտաբար մեզ թերի է հասել Սուքիասի «Տաղ վասն ուրախութեան մարդկան ի Սուքիասէ» խորագրով ոտանավորը21, որտեղ թեև չկա սիրո խոստովանություն, բայց դրա փոխարեն առկա է սիրելի կնոջ ապրումների նկարագրությունը.

Շտապելով, շտապելով հազիւ հասի յայգին,
Ուր գտի լալագին զքոյրն քաղցրագին։
Իբրև ետես նա զիս, խսկոյն բերկրեցաւ,
Առեալ ողջոյն սիրոյ, մխիթարեցաւ,
Սիծաղելով, ծիծաղելով եբեր սափոր գինոյն,
Առ ոտս վարդենոյն և խնձորենոյն...

Նորն այստեղ նաև այն է, որ սիրո վայելքը զուգակցվում է բնության գեղեցկություններից ստացած հաճույքի և աշխարհիկ զվարճությունների՝ երգի, պարի, կեր ու խումի հետ.

Իբրև ես ըմպէի և խրախանայի,
Առեալ զհոտ ծաղկանց զուարճանայի,
Ցանկարծակի, յանկարծակի լուայ զերգս թռչնոց,
Համաձայնելոց ի միջոյ ծառոց։

21 Նույն տեղում, ձեռ. № 9597, թ. 41ա—41բ։

Ընդ որս ձայնակցեալ և ես գոչէի,
Զքոյրն իմ շնորհալի գովաբանէի,
Նափս հարելով, ծափս հարելով մինչև իսկ կազմեցաւ,
Սեղան կազմեցաւ և զարդարեցաւ։

Իր թեմայով Սուքիասի այս բանաստեղծությունն աղերսվում է Նաղաշ Հովնաթանի ուրախության տաղերին, սակայն եթե Նաղաշի երգերը հորինված են ժամանակի ժողովրդական, կենդանի լեզվով, ապա Սուքիասը գրում է այսպես կոչված «պարզ գրաբարով» և կիրառում մի շարք ձևական հնարանքներ, որոնք ինչ որ չափով վնասում են բանաստեղծության անմիջականությանն ու հուզականությանը։

Իրենից փոքր ինչ վաղ հանգես եկած բանաստեղծներ Ստեփանոսի, Խաչատուրի և Սիմեոն Կաֆացու նման Սուքիասը ևս ունի վարդի և սոխակի սիրավեպի մշակումներ։ Սրանք, բացի «Ի ձեռաց վարդին գանգատ պիլպիլին» սկսվածքով ոտանավորից[22], որը տաղերգության համանման երգերի մի կրկնություն է, բավականաչափ հետաքրքիր են որպես սյուժեի՝ ուշ շրջանում ստեղծված ինքնատիպ մշակումներ։ Սրանցում Սուքիասը սիրավեպի երկու քնարական հերոսների կերպարները կոնկրետացնում է ավելի շուտ ոչ թե ավանդական երկխոսությունների կամ վարդի ու սոխակի միջև իբր տեղի ունեցած նամակագրության ձևով, այլ նկարագրում է սիրո ընթացքն ու հեղինակային խոսքով գնահատում սիրահարներին։ Օրինակ՝ «Ի դրախտէն անմահ կենաց» սկսվածքով ոտանավորում[23] նա ինքն է ներկայացնում վարդին ու սոխակին.

Ի դրախտէն անմահ կենաց,
Թռչուն 'մ եկեալ առ մեզ եկաց,
Զանունն պիլպիլ բացածայնեաց,
Անուշ երգով եղանակեաց...

Որ և տարին բուն լուռ եկաց,
Միայն գարնան ամսոյն եբաց,
Ցայգին բոլոր և պարտիզաց,
Շրշէր, խնդրէր ի մէջ ծաղկանց։

Դրանից հետո է միայն, որ սոխակը մի քանի հիացական բառերով դիմում է վարդին.

Ուր ես, իմ վարդ, գունով ընտրած,
Հոտով ապնիւ, քաջիշկ ախտաց...
Իմ սիրուն վարդ և զարդարած,
Դու թագաւոր ամէն ծաղկանց...

«Ի գարնանային ամսին՝ մարտին, ապրիլին» տողով սկսվող ոտանավորում[24] նույնպես երկխոսության ու նամակագրության ձև չկա։ Այստեղ վարդի գեղեցկության նկարագրությունն սկսվում է հեղինակային խոսքով։ Ընդ որում՝ Սուքիասը վարդին պատկերում է նորաբաց գարնան համայնապատկերի մեջ.

Ի գարնանային ամսին՝ մարտին, ապրիլին,
Մայիսին ուժգին երկիրս է ադին,
Ծառք և տունկք փթթին կանաչ սաղարթին,
Ծաղկունք բոլորին, պարեն շուրջ վարդին։

Սրան հետևում է սոխակի մենախոսությունը, նրա սիրո խոստովանությունն ու վարդի գովքը.

Ո՞ւր ես, ո՜վ իմ վարդ, իմ սիրտ և հոգին,
Ո՞ւր ես, նազելի և իմ սէր սրտին,
Ո՞ւր ես հեռացեալ աչաց անտեսին,
Զիս թողեր լքեալ ողբով լալագին...

---

22 Նույն տեղում, ձեռ. № 1635, թ. 35բ—37ա։
23 Նույն տեղում, թ. 37ա—38ա։
24 Նույն տեղում, թ. 30ա—31ա։

Ա՛յ իմ գեղեցիկ վարդ ծիրանափին,
Երևիս փառաք արքայականին,
Ծիծաղածաւալ զուարթ պայծառին,
Վայել է խնդալ քեզ ընդ պիւպիւլին։

Սուրիասի ոտանավորների մեջ այս սյուժեի յավագույն մշակումը «Տաղ պիւլպիւլի և վարդի ասացեալ ի Սուրիաս վարդապետէ» խորագրով ոտանավորն է[25], որն իր ամբողջության մեջ նույնպես լիովին չի համապատասխանում վարդի և սոխակի ավանդական սիրավեպին։ Այստեղ ևս բանաստեղծն ակտիվ գործողության մեջ չի դնում իր հերոսներին, այլ նրանց դիտելով որպես սիրո կրողներ, այդ զգացման խորհրդանիշներ, ավելի շատ ինքն է գովաբանում մեկի բույրն ու գերազանցությունը շրջապատի ծաղիկներից, մյուսի քաղցրաձայն երգը.

Իմ սիրուն պիւլպիւլ աննման,
Քաղցրաձայն թռչուն պատուական,
Եղանակես երգ զանազան.
Ա՛յ սիրուն պիւլպիւլ աննման,
Քան զամէն թռչուն պատուական։
Սիրուն վարդ, կարմիր, քաղցրատես,
Գունով գեղեցիկ, պայծառ ես,
Ամէն ծաղկանց թագաւոր ես.
Ա՛յ սիրուն վարդիկ աննման,
Քան զամէն ծաղկանց պատուական։

Ու միայն մերթ ընդ մերթ է նա իր հեղինակային գնահատականներն ընդմիջարկում սոխակի ու վարդի երկխոսություններով, որոնք ավելի անկեղծ ու անմիջական են դարձնում ոտանավորը, հուզում իրենց թափանցիկ այլաբանությամբ, որի մեջ այլևս կրոնական երանգ չկա, այլ շերմ սիրո զգացումն է արտացոլված.

Քունն եղեր հարամ աչերուս,
Գիշեր-ցորեկ զարթուն մնալուս,
Ճար չմնաց համբերելուս.
Ա՛յ սիրուն պիւլպիւլ աննման,
Քան զամէն թռչուն պատուական։

Իմ գեղեցիկ վարդ անուշիկ,
Ո՞րք կու տեսնեմ զքո երեսիկ,
Եկ մեր այգին, եղիր հիւրիկ.
Ա՛յ սիրուն վարդիկ աննման,
Քան զամէն ծաղկանց պատուական։

Այս ոտանավորում միահյուսվում են սիրո և բնության մոտիվները. Սուքիասն այստեղ համոզում և հուզում է ապրումի դրսևորման անկեղծությամբ, խոսքի անկաշկանդությամբ ու ժողովրդական երանգներով։ Այստեղ ևս նոր ժամանակների պահանջներին համաձայն, շատ փոփոխություններ է կրել ավանդական սյուժեն՝ թոթափելով կրոնական ենթիմաստն ու դառնալով սիրո և աշխարհիկ վայելքի բանաստեղծական արտահայտություն։

Նույնը, թերևս ավելի ընդգծված, նկատում ենք Սուքիասի բնապաշտական երգերում, որոնցից մեկն է «ի զրօսանս հեշտութեան տեսութեան աչաց» տողով սկսվող ոտանավորը[26]։ Նոր ժամանակներում բանաստեղծի հոգեբանության ու մտահայացքի մեջ տեղի ունեցած փոփոխությունների մասին ավելի հստակ պատկերացում կազմելու համար համադրենք Սուքիասի

---

25 Մատենադարան, ձեռ. № 10167, թ. 36ա—37ա, ձեռ. № 9597, թ. 41բ—42բ, ձեռ. № 9362, թ. 2ա—2բ... և այլն, ընդամենը 21 տարբերակ և «Գրքուկս, որ կոչի տաղարան», Կ. Պոլիս, 1740, էջ 351—353։

26 Մատենադարան, ձեռ. № 1635, թ. 24բ—25ա և ձեռ. № 6588, թ. 56բ։

այս բանաստեղծությունն ու Հովհաննես Թլկուրանցու «Աստուած անսկիզբ և անսահման» «կոչածքով տաղը, որին գուցե և ծանոթ է եղել Սուքիասը։ Երկու հեղինակներն էլ գովերգում են բնության ընձեռած բարիքները, սակայն տարբերություն կա նրանց գովերգությունների մեջ։ Սուքիասի տաղանդավոր նախորդը մի տեսակ հեռվից հիացողի հույզն է արտահայտում՝ ոչ մի վայրկյան չմոռանալով և անընդհատ հիշեցնելով, որ բնության բոլոր հրաշալիքները արդյունքն են «անսկիզբ և անսահման» աստծո արարչագործության.

Կակղացան ծառոց ոստունքն,
Մէկ հետ մէկի մբրդունք հասան.
Թուքն յառաջեաց քան ըզհալուան,
Կեռասն աղեղ էր ի նման.
Միշմիշն ի ծառն դեղնեցան
Ի՛այտ խնձորնիդ կարմրեցան։
Մբրդունքն ըղտանձն խոտեցին՝
Մինչ հասանէ կայր անսասան։
Ընկուզն, յունապն ու կաստանան,
Նուշն ու ֆրնտուխն քաղցրացան։
Նուռն այլ երաց հաղար ակուայն,
Ապրաւն ի ծառն կախուեցաւ,
Սերկևիլն դեղնեցաւ,
Խոխն ի կապէն թուլցաւ անկաւ։
Նարինջն, թուրինջ, լիմոնն գայ
Եւ ղարդմորդուն բառքն բանայ։
Թէ այտ հեծելտ էր որ անցաւ,
Կու գայ խաղողն գովական,
Զի սա եհան զմեզ ի դրախտէն,
Ցորժամ եկեր ըզնա Ադամ։
Զփակեալ դուռն դրախտին
Կրկին խաղողն եբաց մարդկան...27 և այլն։

Մինչդեռ Սուքիասը վայելող է, որին ավելի շուտ բնության ընձեռած բարիքները վայելելու հնարավորությունն է հաճույք պատճառում։ Հենց այդ զգացումով է նա սկսում իր ոտանավորը.

Ի զբօսանս հեշտութեան տեսութեան աչաց,
Ճեմեսցուք ի խնձոյս ճախնից և մրգաց,
Դիմելով ղյոգներանգ գոյնս բուրաստանաց,
Զմայլեսցուք ի հոտոց ծաղկանց և մրգաց։
Ուտելով, ըմպելով քաղցրահամ խորտկաց,
Թմրեսցուք ի վայելս վարդիցդ շուշանաց,
Լսելով զեղանակս թռչնոց, պլպուլեաց,
Օրհնեսցուք զստեղծող զաստուածն բարձանց... և այլն։

Սրանից հետո է միայն, որ նա անցնում է զանազան մրգերի ու պտուղների գովաբանությանը՝ ամեն վայրկյան ակնարկելով, որ ինքը ճաշակել է ու ճաշակելիս մեծագույն հաճույք է ստացել.

Իւսաշար ծառատունկ պտղատու մայրեաց,
Գովեսցուք զխնձորն բժիշկ հիվանդաց
Եւ զտանձն ընդ նմին քաղցրահամ շաքարած,
Սիրեսցուք և զթուզն անուշ կոկորդաց։

---

27 Տե՛ս Հովհաննես Թլկուրանցի, Տաղեր, աշխատասիրությամբ Է. Պիվազյանի, Երևան, 1960, էջ 167—168։

Քան զնուշն անուշիկ բնաւ չէ եղած,
Ասացուք և նոան համն ու հոտն օրհնած,
Սալորին ազգ և ազգ տեսակն է գրած,
Համբուրեմ զդեղձին կարմիր ոյտն օրհնած։

Իսկ կիլասն, որ կարմիր գունդ-գունդ է կապած,
Եկ տեսցուք և զընկոյզն, որ բարձր է կախած,
Թթենւոյն զտերևն զոմաշ է շինած,
Զարմասցուք ճիթենւոյն իւղոյն պարարած։

Առ խաղողն զի՞նչ ասեմ, յամենից սիրած,
Հմպեսցուք զգինին բաժակ անուանած,
Լիմոնին, թուրինճին հոտիկն է գոված,
Կերիցուք զծիրանն սակաւ սակաւաց... և այլն։

Նշված առանձնահատկություններով Սուքիասի այս բանաստեղծությունն աղերսվում է մեր միջնադարյան բանաստեղծության լավագույն երկերից մեկին՝ Դավիթ Սալաձորցու «Գովասանք ծաղկանց» ստեղծագործությանը։

Այսպիսով, Սուքիասը XVII դ. նշանավոր քերթողներից մեկն է։ Նրա բանաստեղծությունները առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում որպես գեղարվեստական արտահայտություն այն փոփոխությունների, որոնք, ժամանակի պահանջների թելադրանքով, տեղի էին ունեցել մարդկանց մտածողության և հոգեբանության մեջ։ Սուքիասի ստեղծագործությունը ևս վկայություն է այն իրողության, որ XVII դ. երկրորդ կեսում կրոնական-ասկետական մտայնությունն այլևս առաջվա ուժն ու տարածումը չուներ։ Դրա փոխարեն անսքող ու տիրականորեն իր պատշաճ տեղն էր նվաճել սիրո և վայելքի փառաբանությունը, որն իր հետ բերել էր նաև արտահայտման սրաբուխ, անմիջական եղանակ՝ հաճախ համեմված ժողովրդական լեզվաձևերով։ Սուքիասի տաղերի զգալի մասը համահունչ է ժամանակի լավագույն բանաստեղծների ստեղծագործություններին և նրանց հետ միասին նախապատրաստել է XVIII դ. աշխարհիկ քնարերգության ձևավորումը։

ПОЭТ XVII в. СУКИАС

АСМИК СААКЯН

Резюме

Творчество поэта XVII века Сукиаса по сей день остается почти не изученным. Из его поэтического наследия до нас дошло 53 стихотворения, посвященных темам покаяния, любви и природы. В них ярко отражены изменения, происшедшие в XVI—XVII веках в армянской поэзии благодаря новым социально-экономическим отношениям: религиозное мировосприятие постепенно отходит на второй план, уступая место светскому.

Сукиас принадлежит к числу тех поэтов, которые подготовили почву для зарождения армянской светской лирики XVIII века.